— Բայց ի՞նչ է սովորեցնում իր զաւակին հայ մայրը: Սովորեցնում է խոնարհ եւ համբերող լինել... Եւ ստրկութիւնը ուսանում է որդին օրօրոցի մէջ...: «Խոնա՛րհ եւ համբերո՛ղ լինել»... գեղեցիկ խօսքեր են, քրիստոնէական ընկեր՝ հաշտութեան խօսքեր են: Բայց մենք բոլորովին ուրիշ աշխարհում ենք ապրում. մեզ դեռեւս պէտք է հետեւել այն օրէնքին, որ ասում է՝ «Ակն ընդ ական»:

Ասլանը լռիկ մէկն էր, բայց երբ նա սկսում էր խօսել, էլ խօսքերին վերջ չկար:

— Քուրդ կինը իր զաւակներից գազաններ է զարգացնում, — ասաց նա. — բայց հայ կինը պատրաստում է գառներ: Ի՞նչ համեմատութիւն կայ այս երկուսի կենակցութեան մէջ. չէ՞ որ վերջինը պէտք է զոհ գնայ իր տկարութեամբ առաջինի կատաղութեանը: Արդարեւ, ես ընդդէմ եմ վայրենութեան, բայց անձնապաշտպանութիւնը սուրբ է մարդու համար նոյնքան, որքան արդար վրէժխնդրութիւնը:

Ասլանի խօսակցութիւնը ընդհատեց մի ծառայ, որ ներս մտնելով ասաց, թէ բեկը իր առանձնարանում կոչում է նրան: Նա իսկոյն վեր կացաւ գնաց: Ես մնացի մենակ: Նոյն միջոցին իշխանի աղջիկները ներս մտան, հաւաքեցին մեր անկողինները: Նրանցից մէկը ջուր բերեց եւ սկսեց իր ձեռքով ածել, որ ես լոացոեմ: Լեռների այս հարազատ կոյսը մի սիրուն աղջիկ էր, եւ խիստ հրապուրիչ իր վայրենի գեղեցկութեամբ:

— Քո անկողինը ես էի պատրաստել, — ասաց նա: — Դու հանգիստ քնեցի՞ր, լաւ երազներ տեսա՞ր:

— Լաւ երազներ տեսայ: Ես ամբողջ գիշերը խօսում էի մի աղջկայ հետ, որը այնպէս գեղեցիկ էր, որպէս դու:

Այս խօսքը ես ասեցի բոլորովին կատակով, բայց նա շարժեց սիրուն օրիորդի սիրտը, եւ նրա արտասուքի հետ դուրս թափեց մի գաղտնիք, որ ոչ սակաւ զարմացրուց ինձ:

— Ես գեղեցիկ չեմ, — ասաց նա, — ես մի անպէտք լաթի կտոր եմ, որ ոտքի տակ են գցում...

Ես ոչինչ չգտայ նրան պատասխանելու, որովհետեւ չէի իմանում, թէ ի՞նչ մտքով է ասում այդ: Նրա եղբայրները ներս մտան. օրիորդը հեռացաւ:

Արեւը նոր սկսեց ծագել:

Նոյն միջոցին բէկի առանձնասենեակից ետ դարձաւ Ասլանը, ինձ յայտնեց, թէ ինքը մի ոչ այնքան հեռու տեղ պէտք է երթայ, եւ պատուիրեց սպասել մինչեւ իր վերադարձը: